ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-2000 ԹԹ.

Հայ ժողովրդին վիճակված է պատմական վայրիվերումներով լի ճակատագիր: Նա բազմաթիվ անգամ կորցրել է իր պետականությունը, հայտնվել օտարների դառնաղետ տիրապետության տակ, ենթարկվել ցեղասպանության, սփռվել աշխարհով մեկ, սակայն միևնույն է չի կորցրել իր ապրելու կամքն ու վճռականությունը: Գոյատևման այդ դժվարին ճանապարհին հայ ժողովուրդը հանդիպել է բազում դժվարությունների: Օտար ափերում ձևավորված սփյուռքը գերագույն ջանքեր էր գործադրում իր հայեցիությունը պահպանելու համար: Արտերկրում նա հիմնում էր դպրոցներ, եկեղեցիներ, կազմակերպություններ, սակայն այդ ամենի հետ մեկտեղ սփյուռքը օտարության մեջ զգում էր հայրենիքի կարիքը: Ոչնչացման վտանգը կարող էր կանխել միայն ու միայն կապը մայր հայրենիքի հետ: Պատմագիտական տեսանկյունից սփյուռք ասելով նախ և առաջ հասկացվում է 1915թ. հայկական ցեղասպանության և բռնագաղթի հետևանքով պատմական Հայաստանից քշված և աշխարհով մեկ սփռված հայությունը, որն իր գոյության ողջ ընթացքում գերլարված պայքար է մղում իր ազգային դիմագիծը պահպանելու համար:

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունը առավել ևս, քան երբևէ զգաց սփյուռքի կարիքը: Դա ոչ միայն նյութական աջակցության անհրաժեշտությունն էր, այլև սերտ մերձեցման, փոխշփման, երկուստեք ակտիվ համագործակցության անհրաժեշտությունը: Երբ Հայաստանը Խորհրդային Միության կազմում էր որպես միութենական հանրապետություն, կապը արտերկրի հայության հետ բացառապես իրագործվում էր տակավին 1964 թվականին ստեղծված «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե»-ի միջոցով: Խորհրդային Միությունը թույլատրում էր միայն հայրենիք-սփյուռք մշակութային համագործակցությունը խստիվ բացառելով որևէ այլ կապ: Կոմիտեի հիմնական խնդիրը աշխարհասփյուռ հայության հետ հայրենասիրական ու մշակութային կապի ամրապնդումն ու ընդլայնումն էր: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատանքը հիմնականում կայանում էր նրանում, որ կոմիտեն արտերկիր էր առաքում սփյուռքահայության համար խիստ անհրաժեշտ հայրենիքի գրական ու մշակութային կյանքն արտացոլող լրագրեր, ամսագրեր, գեղարվեստական ու երաժշտական գրականություն:

Լրագրերից ու ամսագրերից կոմիտեն առաքում էր «Հայրենիքի ձայն», «Գրական թերթ», «Խորհրդային գրականություն», «Արվեստ», «Գարուն», «Վերածնված Հայաստան» և այլ ամսագրեր ու լրագրեր: Այսպես

1990թ-ի դրությամբ կոմիտեն սփյուռքի ավելի քան 650 կազմակերպությունների և 4500 քաղաքացիների առաքել է 30 անուն լրագիր ու ամսագիր՝ շուրջ 12 000 օրինակ ընդհանուր տպաքանակով[1]:

Կոմիտեն մեծ օգնություն ու օժանդակություն է ցույց տվել գաղթօջախների հայկական դպրոցներին՝ նպատակ ունենալով նպաստել հայապահպանությանը: Առաքված գեղարվեստական գրականության հիմնական նպատակը սփյուռքին հայեցի պահելն էր, ուծացումից փրկելը: Եվ պատահական չէր, որ ուղարկված գրականությունը հիմնականում ընդգրկում էր հայ ժողովրդի պատմության, նրա լեզվի, մշակույթի, իր գոյության համար հայ ժողովրդի պայքարի կարևոր դրվագներին նվիրված գործերը:

Կոմիտեի կողմից կազմակերպվել են նաև մի շարք մշակութային, հասարակական և պետական գործիչների փոխայցեցություններ արտերկիր և այնտեղից էլ Հայաստան, ինչպես նաև սփյուռքահայ և հայրենական նկարիչների ցուցահանդեսներ: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կողմից որոշ ընդմիջումներով իրականացվել են նաև սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա դասընթացներ մայր հայրենիքում: Այսպես՝ 1990թ-ին վերապատրաստման դասընթացներին մասնակցել աշխարհի տարբեր երկրների հայկական վարժարանների 37 ուսուցիչներ[2]:

Կոմիտեի ուշադրության կենտրոնում է եղել աղետի գոտուն ցույց տրվող օգնության կազմակերպումը, սփյուռքի մասնակցությունը վերականգնողական աշխատանքներին: Երկրաշարժից հետո սփյուռքահայ բոլոր կազմակերպություններն ու անհատները իրենց ամբողջ ուժը ներդրեցին աղետյալներին օգնելու և հայրենիքը վերականգնելու գործին: Այդ աշխատանքներում կոմիտեն սերտորեն համագործակցել է Ֆրանսիայի, Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի և այլ երկրների համապատասխան կազմակերպությունների հետ: Հայաստանում ակտիվ գործունեություն են ծավալել «Սոս Արմենիա»-ն, «Կապույտ խաչ»-ը, «Հայ ավետարանչական ընկերություն»-ը և այլ կազմակերպություններ, որոնք տասնյակ միլիոնավոր դոլար արժողությամբ ուտեստեղեն, դեղորայք, հագուստ, բժշկական գործիքներ, դպրոցական լաբորատորիաներ առաքեցին հայրենիք:

Կոմիտեի կողմից մի քանի տարի անընդմեջ ընդունվել են ֆրանկոամերիկյան «Երկիր և մշակույթ» կազմակերպության երիտասարդական խմբերը սփյուռքահայ երիտասարդներին մասնակից դարձնելու աղետի գոտում կատարվող աշխատանքներին: 1990թ-ին վերոհիշյալ կազմակերպության 4 խմբեր (յուրաքանչյուրը թվով 30 հոգի) աշխատեցին Ամբերդում և

---

[1] Հայաստանի Ազգային Արխիվ, ֆոնդ 875, ցուցակ 16, գործ 137:
[2] Հայրենիքի ձայն, 29 օգոստոսի, 1990թ.:

Գոգարանում[3]: Այսպիսով Հայաստանի հուշարձանների պահպանության գործում իրենց ավանդն են ներդնում նաև սփյուռքահայ երիտասարդները: Հայ Օգնության Միությունն (ՀՕՄ) էլ իր հերթին 25 հոգուց բաղկացած երիտասարդական խումբ ուղարկեց Հայաստան Ախուրյանի շրջանի Գետք գյուղի վերականգնման աշխատանքներին մասնակցելու համար:

Մեծ եղեռնի 75-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցելու նպատակով Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կողմից Ավստրալիայի, Իսրայելի, Հորդանանի, Կիպրոսի, Քուվեյթի, Արաբական էմիրաթների և Սիրիայի հայկական գաղթօջախներ են գործուղվել անվանի պատմաբաններ, հրապարակախոսներ Գևորգ Ղարիբջանյանը, Ստեփան Պողոսյանը, Սպարտակ Բաղդասարյանը, Գևորգ Էմինը, Լորիս Քալաշյանը, Հրաչիկ Սիմոնյանը, Բագրատ Ռիլուբաբյանը և Վահան Բայբուրդյանը: Արվեստագետների խմբեր են գործուղվել Ավստրալիա, Հորդանան, Քուվեյթ, Եգիպտոս և Սիրիա մեծ աշխուժություն առաջացնելով այդ երկրների հայկական գաղթօջախներում: Սփյուռք են գործուղվել նաև գիտնականներ, գրականագետներ, պարուսույցներ և այլն:

1990թ-ին կոմիտեի հրավերով Հայաստան են այցելել արտերկրի տարբեր կազմակերպությունների և շրջանակների շուրջ 740 ներկայացուցիչներ, արտասահմանի հայ համայնքներն են գործուղվել հանրապետության մոտ 200 արվեստագետներ, գրողներ, գիտնականներ, քաղաքական և հասարակական գործիչներ[4]

1988թ-ի դեկտեմբերյան երկրաշարժը և արցախյան ազգային-ազատագրական պատերազմը բոլորովին նոր հիմքերի վրա դրեցին հայրենիք-սփյուռք կապերը: Դրանք դարձան առավել դինամիկ, ակտիվ ու նպատակաուղղված: Առավել քան երբևէ հայրենիքը և սփյուռքը զգացին, որ խիստ անհրաժեշտ են միմյանց: Անկախացումից հետո Հայաստանում ստեղծվեցին նոր կազմակերպություններ, որոնք ապահովում էին կապը սփյուռքի հետ: Այս պայմաններում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի առջև իր գործունեության վերաբերյալ ծառացան նոր խնդիրներ: «Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական վերափոխումները որակապես նոր խնդիրներ են դնում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի առջև: Դրանք պահանջում են համայն հայության ազգային շահերի և ընդհանրական նպատակների հայեցակետով իմաստավորել կոմիտեի նախընթաց գործունեության արդյունքները և ճշտորոշել նրա տեղն ու դերը արդի փուլում»,–նշում է 1991թ-ից կոմիտեի նախագահ ընտրված ակադեմիկոս

---

[3] Հայաստանի Ազգային Արխիվ, ֆոնդ 875, ցուցակ 16, գործ 137:
[4] Հայաստանի Ազգային Արխիվ, ֆոնդ 875, ցուցակ 16, գործ 48:

Հրաչիկ Սիմոնյանը[5]: Այսպիսով կոմիտեն վերանայելով անցած տարիների իր գործունեությունը՝ վերամշակում է քաղաքական գործունեության նոր դրույթներ: Ըստ այդ նոր դրույթների կոմիտեն իր համար ելակետային է համարում հայ ժողովուրդը դիտել իբրև միասնական ազգային հավաքականություն (Հայաստան, Արցախ, ներքին և արտաքին սփյուռք):

Վերակառուցման արդյունքում կոմիտեն վերանվանվում է Հայրենիք-սփյուռք կապերի կոմիտե: Իր կանոնադրության մեջ հայրենիք-սփյուռք կապերի կոմիտեն իրեն հռչակում է ինքնակառավարվող, ապակուսակցական, քաղաքականապես չեզոք հասարակական կազմակերպություն: Նշվում է, որ կոմիտեն համագործակցում է սփյուռքի մշակութային, բարեսիրական, հայրենակցական միությունների, կրթական, գիտական, կրոնական հաստատությունների, երիտասարդական-պատանեկան, մարզական կազմակերպությունների, գործարար շրջանակների, ինչպես նաև անհատ անձանց հետ: Որպես նպատակային ուղղության հիմնական գործունեություն «կոմիտեն սատարում է հայրենիք-սփյուռք կապերի սերտ միահյուսմանը, հայ ժողովրդի միասնության ապահովմանը»[6]:

Սակայն կոմիտեի ձեռնարկած այս փոփոխությունները չկարողացան կանխել նրա լուծարումը: Կանխատեսելով այդ կոմիտեն 1993թ-ի մայիսին ՀՀ նախագահի և կառավարության ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքների վրա, որ հանրապետության կառավարությունը, ինչպես նաև տարբեր հիմնարկ-ձեռնարկություններն ու կազմակերպությունները բազմապիսի կապեր հաստատելով սփյուռքահայ այլևայլ կառույցների և անհատ գործիչների հետ, շրջանցում են կոմիտեն, նրան մասնակից չեն դարձնում այն միջոցառումների մշակմանն ու իրագործմանը, որոնք վերաբերում են սփյուռքի հետ հասարակական, մշակութային և տնտեսական կապերի համակարգին, ուստի կոմիտեն ՀՀ նախագահին առաջարկում է այն դարձնել պետության հովանավորության ներքո գտվող «Հայրենիք-Սփյուռք» հասարակական ընկերություն, ինչպես նաև սփյուռքահայ համայնքներում ստեղծել «Սփյուռք-Հայրենիք» ընկերություններ, որոնք սերտ կապ կհաստատեն նոր կարգավիճակի ընկերության հետ: Սակայն կոմիտեն փրկելուն ուղղված այս ջանքերը հաջողությամբ չպսակվեցին:

Նոր ստեղծված բազմաթիվ կազմակերպությունների անկախ գործունեությունը, ինչպես նաև պետության հոգածությունից և ֆինանսավորումից ամբողջովին զրկվածությունը հանգեցրեց նրան, որ կոմիտեն դադարեցրեց իր գործունեությունը: Անհրաժեշտ է նշել, որ երկար տարիներ հայրենիք-սփյուռք

---

[5] Նույն տեղը, ֆոնդ 875, ցուցակ 16, գործ 76:
[6] Նույն տեղը, ֆոնդ 875, ցուցակ 16, գործ 53:

առնչություններում բացառապես լինելով միակ կազմակերպությունը կոմիտեն զգալի դեր խաղաց այդ հարաբերությունների դրական տեղաշարժի առումով:

1993թ-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության համակարգում բացվում է սփյուռքի հարցերի վարչություն: Այսպիսով Հայաստանում ստեղծվեց սփյուռքահայությանը առնչվող հարցերի համակարգող և կարգավորող պետական մարմին: Վարչության ստեղծումով սփյուռքում եղած ինչպես ավանդական, այնպես էլ նոր ստեղծվող հասարակական կազմակերպությունները հնարավորություն և իրավունք ստացան անմիջականորեն առնչվել պետական կառույցների հետ:

1990-ական թ. ակտիվ ու դարձան հայրենիք- սփյուռք մշակութային առնչությունները: Հայրենիք առաջին անգամ այցելեցին բազում սփյուռքահայ մշակութային գործիչներ՝ գրողներ, նկարիչներ, քանդակագործներ, երգիչներ և այլն: Իսկ սփյուռքահայ մի շարք կազմակերպություններ ակտիվորեն աջակցեցին թե՛ Հայաստանի, և թե սփյուռքի կրթական հաստատություններին:

Մշակութային ասպարեզում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) և համայն սփյուռքում իր մեծագույն ներդրումն ունի Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամը, որը հիմնադրել է միության ցկյանս պատվավալ նախագահ Ալեք Մանուկյանը 1968թ-ին: Այս հիմնադրամը ծառայում է հանգստյան կոչված ուսուցիչների և մտավորականների թոշակի հատկացման, գրքերի ու ամսագրերի հրատարակության ծախսերի ծածկման, հեղինակներին քաջալերելու նպատակով մեծ քանակով նրանց գրքերի գնման, գիտական և արվեստի ուսումնասիրությունների, գիտաժողովների և ցուցահանդեսների հատկացումներին: Հիմնադրամի շնորհիվ Հայաստան է ուղարկվել մեծաքանակ թուղթ սփյուռքի դպրոցների համար հայոց լեզվի դասագրքեր հրատարակելու նպատակով, գումարներ են հատկացվել սփյուռքահայ մի շարք ամսագրերի հրատարակության համար, Թեքեյան մշակութային միությանը, Կանադայի իրանահայ գաղթականներին, մի շարք հեղինակների իրենց գրքերի հրատարակությունների համար և այլն: Շնորհիվ ՀԲԸՄ-ի տրամադրած կրթաթոշակների ամեն տարի հարյուրավոր ուսանողներ շարունակում են իրենց ուսումը աշխարհի տարբեր բուհերում: ՀԲԸՄ-ն մեծ կարևորություն է տալիս հատկապես հայ նոր սերնդի դաստիարակությանը:

1991թ-ի դրությամբ ՀԲԸՄ ուսումնական հաստատությունների աշակերտների ընդհանուր թիվն է 6610[7]: Բացի այս ամենից 1991թ-ի դրությամբ ՀԲԸՄ-ն նյութապես օգնում է շուրջ 150 սփյուռքահայ դպրոցների և ավելի քան 10 օտար համալսարանների, որոնք ունեն հայագիտական ամբիոններ: «Մեր հիմնական նպատակը հոն, սփյուռքի մեջ, հայը հայ պահելն է, իսկ հոս՝ նոր

---

[7] Ազգ, 13 ապրիլի, 1991թ.

երկիր ստեղծելը, որ կենթադրե շատ մեծ ծրագրեր».---ասում է ՀԲԸՄ –ի նախագահ Լուիզ- Մանուկյան Սիմոնը[8]:

Աշխարհի բազմաթիվ երկրներում ՀԲԸՄ-ն ունի իր կենտրոնները:

ՀԲԸՄ-ի շնորհիվ Կալիֆորնիայի համալսարանի հովանավորությամբ 1991թ-ի սեպտեմբերի 21-ին Հայաստանում բացվեց ամերիկյան համալսարան: Ուշագրավ է նաև այն, որ ամերիկահայ ականավոր գրող, խմբագիր, մշակութային և հասարակական գործիչ Անդրանիկ Անդրեասյանը իր ամբողջ ստեղծագործական կյանքի ընթացքում կուտակած հարուստ գրքերի հավաքածուն նվիրեց Հայաստանի Ամերիկյան համալսարանին:

ՀԲԸՄ-ի շնորհիվ է կառուցվում նաև Գյումրիի Գեղարվեստի ակադեմիան:

ՀԲԸՄ-ն նվիրատվություններ է տվել նաև Ս. Էջմիածնի Մայր Աթոռին, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիային, Երևանի պետական համալսարանին, Պետական ճարտարագիտական համալսարանին և Արցախի սոցիալական նախարարությանը: 1993-1994թ.թ. Ալեք և Մարի Մանուկյան ֆոնդը նվիրատվություններ է կատարել Մատենադարանին: 1997թ-ին ՀԲԸՄ-ն 240 հազար դոլար է հատկացնում Երևանի 72 դպրոցներում ջեռուցման տեղային համակարգեր տեղադրելու համար[9]:

Դրվատանքի է արժանի նաև Թեքեյան Մշակութային Միության (ԹՄՄ) գործունեությունը, որի մասնաճյուղը Հայաստանում բացվեց 1990թ-ին: Մեծ է ԹՄՄ-ի ներդրումը Հայաստանի մշակութային և, հատկապես սփյուռքահայության կյանքում, ինչպես նաև հայրենիք-սփյուռք փոխճանաչողության ու մշակութային առնչությունների անդաստանում: ԹՄՄ-ի կողմից երկար տարիներ սփյուռքահայ գրողներին տրվում էր «Հայկաշեն Ուզունյան» գրական մրցանակը: 1995թ-ից մրցանակի ոլորտի մեջ որոշվեց ընդգրկել նաև հայրենի գրողներին:

Հայրենիքի հետ սերտ կապ է պահպանում նաև Իրանահայ ազգային և մշակութային միությունը, որի նպատակը հայ մշակույթին ծառայելն է: Միությունը կազմակերպում է գեղարվեստական երեկոներ, թատերական ներկայացումներ, ինչպես նաև ազգային և կրոնական տոնախմբություններ:

1997թ-ին սփյուռքում գործում էին 160-ից ավել ամենօրյա վարժարաններ և նույնքան էլ կիրակնօրյա դպրոցներ, որոնք ունեին լուծման կարոտ բազմաթիվ հիմնախնդիրներ[10]: Այդ խնդիրների լուծմանն էր ուղղված 1996 թ-ին Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում հիմնված «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը, որտեղ սփյուռքահայ ուսումնական

---

[8] Նույն տեղը, 4 մայիսի, 1991թ.:

[9] Ազգ, 1 հոկտեմբերի, 1997թ.:

[10] Նոր դար, թ 4, էջ 111:

հաստատությունների համար սկսվում են մշակվել ուսումնակրթական ծրագրեր: Կենտրոնը հիմնականում զբաղվում է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, սփյուռքի հայկական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում հայագիտական առարկաների գծով ուսուցիչների պատրաստման գործով:

Հայրենիքը իր հերթին դասագրքեր է կազմում սփյուռքի հայկական դպրոցների համար, դասագրքեր, որոնց նպատակը սփյուռքի հայ երեխաներին իրենց հայրենի պատմությանը ծանոթացնելն էր: Հայրենիք-սփյուռք համագործակցության օրինակ է Համազգայինի հայ կրթական ու մշակութային միության հայագիտական բարձրագույն հիմնարկի տնօրեն Երվանդ Փամբուկյանի և Վլադիմիր Բարխուդարյանի հեղինակությամբ լույս տեսած «Հայոց պատմություն» դասագիրքը, որը համապատասխանում է Լիբանանի հայկական դպրոցների ուսումնական ծրագրերին:

Հայրենիք-սփյուռք մշակութային առնչությունների առանցքային բաղադրիչներից է սփյուռքի հետ կրթական կապերի զարգացումը: Այդ ուղղությամբ տարվող աշխատանքները կայուն հիմքերի վրա դնելուն է լծված դեռևս 1999թ-ի հունվարին ստեղծված ԿԳՆ սփյուռքի բաժնի աշխատանքը: Բաժինն իր գործունեությունը սկսել է սփյուռքի կրթօջախների քարտեզագրմամբ: Բաժնի կարևորագույն ծրագրերից է նաև սփյուռքում գործող կրթօջախների ուսուցիչների վերապատրաստման դասընթացի իրականացումը Հայաստանում: Այդ դասընթացները միտված են սփյուռքի կենսունակության ապահովմանը: Բաժնի կողմից այդ օղակի կարևորագույն մասն է նաև սփյուռքի դպրոցների և ազգային այլ հաստատությունների համար առաջնահերթ նշանակություն ունեցող կադրերի նպատակային պատրաստումը: Սփյուռքի բաժնի 2000թ-ի վիճակագրական տվյալների համաձայն հարենիքում ուսումնառող 933 սփյուռքահայերից 477-ը ընդունվել են վերջին մի քանի տարիների ընթացքում[11]:

2000թ-ին գրեթե տասնամյա ընդմիջումից հետո «Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանավորությամբ ՀՀ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ վերսկսվեց «Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում» ծրագիրը:

Ուշագրավ է այն, որ հայրենիքից բազմաթիվ մշակութային խմբեր են մեկնում արտերկիր հյուրախաղերի: Դրանց նպատակը սփյուռքի հայությանը հայրենիքին ավելի մոտիկից ծանոթացնելն է: Սփյուռքահայությունը մեծ սիրով է ընդունում իր հայրենակիցներին: Այդ ուղղությամբ ակնհայտ է «Հայաստան» ժողովրդական երգի ու պարի համույթի ելույթները Եգիպտոսում, Բուլղարիայում կայացած «Հայկական արվեստ-93» ցուցահանդեսը, Նյու-Յորքում

[11] Հայաստանի Հանրապետություն, 27 հուլիսի, 2000թ.

բացված Հայաստանի երիտասարդ նկարիչների հավաքական ցուցահանդեսը և այլն:

Հայաստանում անցկացվել են նաև համահայկական ուսանողական վեհաժողովներ: Առաջին վեհաժողովը տեղի է ունեցել 1996թ-ին: Այդ վեհաժողովներին մասնակցել են աշխարհի տարբեր ծայրերից եկած բազմաթիվ սփյուռքահայ ուսանողներ: Վեհաժողովի հիմնական նպատակը հայապահպանության վեհ գործին նպաստելն էր:

Հայրենիք-սփյուռք մշակութային առնչությունները ամրագրվում են նաև ուսումնական հաստատությունների միջև կապերի հաստատմամբ: Այդպիսի կապի մասին է վկայում ԵՊՀ-ի և Բեյրութի Համազգայինի հայագիտական հիմնարկի միջև 1991թ-ի 5 տարվա համար կնքված պայմանագրի վերանորոգումը 1996թ-ին, որը վերոհիշյալ կրթօջախների շրջանավարտներին թույլատրում է մասնագիտական կրթությունն ամբողջացնել պետհամալսարանում:

Հայապահպանության գործում անգնահատելի է նաև եկեղեցու դերը: Չնայած գաղթաշխարհում կան տարբեր ուղղվածություն ունեցող եկեղեցիներ, սակայն նրանց գոյության փաստն իսկ հայության շրջանում դրական ներգործության մասին է խոսում:

1990-ական թվականներին հայրենիք են այցելում սփյուռքահայ բազմաթիվ արվեստի գործիչներ: Նրանք Հայաստան են բերում ոչ միայն իրենց արվեստի ստեղծագործությունները, այլև ամեն ինչ անում են հայրենիքը ծանր կացությունից դուրս բերելու համար: Այդպիսիներից է պոլսահայ բանաստեղծ Զարեհ Խրախունին, որը 1990թ-ին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով այցելում է Հայաստան: Սփյուռքահայ գրականության խոշորագույն դեմքերից էր բանաստեղծ, արձակագիր, թատերագիր և հասարակական գործիչ Մուշեղ Իշխանը (Ճենտերեճյան): Հայ ընթերցողը մեծ ցավ ապրեց լսելով Մուշեղ Իշխանի մահվան բոթը 1990թ-ին: Բազմիցս Հայաստան են այցելել լոնդոնահայ բանաստեղծ, հասարակական գործիչ Մանվել Ադամյանը, սիրիահայ գրողներ և հասարակական գործիչներ Թորոս Թորանյանը, Արմեն Դարյանը: Հայրենիքում լայն ճանաչում ունեն անգլիագիր բանաստեղծ և գրաքննադատ Պիտր Բալաքյանը, ականավոր գրողներ Հակոբ Կարապենցը, Կարպիս Սուրենյանը և իրանահայ բանաստեղծ Վարանդը: Հայրենիքում ճանաչում գտած բանաստեղծուհի է նաև Անուշ Նագգաշյանը:

Մի շարք ականավոր սփյուռքահայ նկարիչներ Հայաստանում հանդես են գալիս իրենց անհատական ցուցահանդեսներով: Նրանք փորձում են իրենց արվեստը ի սպաս դնել հայրենիքի տնտեսական և մշակութային վերելքին:

1990թ-ին Հայաստանի պետական պատկերասրահում բացվեց Գառզուի (Գառնիկ Զուլումյան) ստեղծագործությունների ցուցահանդեսը: Հարյուրավոր արվեստասերներ դիտեցին և հմայվեցին նրա գործերով: Ամերիկահայ անվանի նկարիչ է Լևոն Ժամկոչյանը, որը 1990թ-ին բարեգործական

ցուցահանդեսներ է անցկացնում ամբողջ Խորհրդային Միության տարածքում: Ցուցահանդեսի աճուրդից ստացված ողջ գումարը հատկացվում է Գյումրիի գրաֆիկայի ինստիտուտի կառուցմանը: Նկարիչը իր առջև նպատակ է դնում Գյումրիում ստեղծել գրաֆիկայի միջազգային կենտրոն թանգարան-պատկերասրահով, հյուրանոցով: Անվանի նկարիչը Հայաստանի գեղանկարչական և այլ դպրոցներին է նվիրում մոտ 150 հազար դոլար արժողությամբ նկարչական զանազան պարագաներ: 1991-1992թթ.-ին Լևոն ժամկոչյանը նորից Երևանում էր՝ կրկին իր բարեգործական ցուցահանդեսներով: Հայրենիքում մի շարք ցուցահանդեսներով հանդես են եկել սփյուռքահայ նկարիչներ Քերո Անթոյանը, ժանսեմը, Հարությունն Պզտիկյանը:

Ամերիկահայ նկարիչ և քանդակագործ է Վարազ Սամվելյանը: Նրա ստեղծագործությունների բարեգործական ցուցահանդեսը Երևանում բացվել է 1991թ-ին Երվանդ Քոչարի տուն-թանգարանում: Ստացված նվիրատվությունները հատկացվում են Հայաստանի մանկական հիմնադրամին և Գետաշենում, Մարտունաշենում զոհվածների երեխաներին:

Ֆրանսահայ գեղանկարիչ է Զարեհ Մութաֆյանը: Նրա նկարների ցուցահանդեսը տեղի ունեցավ 1990թ-ին Երևանում նկարչի մահվան տասնամյակի առթիվ: Նկարչի որդին Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Արմեն Մութաֆյանը, մեծ ջանքերի գնով կարողացել է ի մի բերել հոր տարբեր երկրների մասնավոր հավաքածուների մաս կազմող նկարները և բերել հայրենիք: Հայրենասեր արվեստագետը շուրջ երեք տասնյակ լավագույն գործեր է նվիրել Հայաստանի պատկերասրահին, իսկ մի քանիսն էլ էջմիածնի վեհարանին:

1990թ-ից Լոս Անջելեսում բնակվող նկարիչ Սամվել Սևադան ծնվել է Հայաստանում: Նկարչական բարձրագույն կրթությունը ստացել է հայրենիքում: ԱՄՆ-ում ունեցել է մի շարք ցուցահանդեսներ: Ամերիկահայ կյանքում երևույթ էր Սամվել Սևադայի կողմից նկարչական մանկական դպրոցի բացումը, որտեղ նա հայ երեխաներին սովորեցնում է գեղանկարչություն: «Իմ հիմնական թեման եղել է և մնում է Սերը, Կարոտը, Հայրենիքը»,--ասում է Սամվել Սևադան[12]:

Մարսելի հայ մշակույթի տան տնօրեն Խաչիկ Ելմազյանը ևս հայրենիք այցելած երջանիկ սփյուռքահայերից է: Նրա ջանքերով է ստեղծվել «Սահակ-Մեսրոպ» երգչախումբը, որը մեծ ճանաչում ունի Մարսելի հայ գաղութում:

Վիեննայի օպերային թատրոնի մենեղգչուհի է Սոնա Ղազարյանը, որը երկրաշարժից անմիջապես հետո հանդես եկավ մի շարք բարեգործական համերգներով՝ աղետի գոտուն աջակցելու նպատակով:

Ֆրանսահայ դիրիժոր է Նվարդ Անդրեասյանը: Նա ստեղծել է իր սեփական նվագախումբը: Ֆրանսահայ ճանաչված դիրիժոր է նաև Ռոման քաղաքի երաժշտանոցի ռեկտոր Ալեքսանդր Երանոսյանը, որը հայտնի է

---

[12] Ազգ, 1 փետրվարի, 1992թ.:

Երևանում անցկացրած իր համերգներով: Նա երբեք չի կտրվել հայ իրականությունից, մշտապես կապերի մեջ է եղել հայ կոմպոզիտորների և կատարողների հետ: Նշանավոր դիրիժոր է նաև ամերիկահայ Ջորջ Փեհլիվանյանը, որը բազմիցս այցելել է հայրենիք և հանդես եկել համերգներով:

Ֆրանսահայ կոմպոզիտոր, խմբավար Փարիզի «Սիփան-Կոմիտաս» երգչախմբի երկարամյա ղեկավար է Կարպիս Ափրիկյանը: Երգչախմբի երգացանկը կազմված է հայ դասական ու ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններից: Ափրիկյանի շնորհիվ երգչախումբը իրականացրել է հայրենանվեր այլ ձեռնարկներ ևս:

Սփյուռքահայ նվագավարներ են Հովսեփ Շիքիլյանը, կանադահայ նվագավար Հարութ Ֆազլյանը, որոնք բազմաթիվ երկրներում հանդես են եկել համերգներով:

Արգենտինահայ անվանի երգահան ու խմբավար է Ժան Ալմուխյանը, որն արժանացել է Հայաստանի կոմպոզիտորների միության սահմանած Կոմիտասի անվան մրցանակի: Նա ղեկավարն է «Արաքս» երգչախմբի, մի երգչախումբ, որը հայտնի է նաև հայրենիքի համար կազմակերպված իր բարեգործական համերգներով:

Իսկ ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրին հայ ժողովուրդը հրաշալի գիտի: Այս մեծ երգիչը երկրաշարժից անմիջապես հետո բարեգործական վիթխարի աշխատանք ծավալեց Հայաստանում: 1996թ-ին Ազնավուրը հայրենիքում հանդես եկավ իր համերգով մեծ հիացմունք պատճառելով հայ հանդիսատեսին: Նա նաև աշխարհի մի շարք երկրներում հանդես է եկել բարեգործական համերգներով ի նպաստ Հայաստանի:

Սփյուռքահայ մի շարք երգչախմբեր ևս ակտիվ գործունեություն են ծավալել Հայաստանում: Հիշատակության է արժանի հատկապես Լոս-Անջելեսի «Սիփան» երգչախմբի հայաստանյան համերգները Երևանում 1990թ-ի ապրիլին, որոնք մեծ խանդավառությամբ ընդունվեցին հայ հանդիսատեսի կողմից: Մայր հայրենիքում «Սիփանը» մեծ ճանաչում գտավ հատկապես 1990-91թթ., երբ Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության, ինչպես նաև Կոմիտասի անվան երաժշտանոցի սիմֆոնիկ նվագախմբերի նվագակցությամբ ելույթ ունեցավ Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում: Այնուհետև «Սիփանը» մեկնեց Գյումրի, ուր հանդես եկավ աղետյալ գյումրեցիների առջև: Երգչախմբի գործունեության հիմնական նպատակը օտար ափերում գտնվող հայության մեջ հինավուրց հայկական երգ ու երաժշտությունը վառ պահելն է:

Սփյուռքահայ ճանաչված կինոռեժիսորներ են Ռոբեր Կետիկյանը, Ատոմ Եգոյանը, Անրի Վերնոյը (Աշոտ Մալաքյան): Նրանք ամբողջ աշխարհին հայտնի են հայկական ցեղասպանությանը նվիրված իրենց մի շարք ֆիլմերով: Ամերիկահայ հայտնի դերասանուհի է Նորա Արմանին: 1992թ-ին ամերիկյան կինոինստիտուտի փառատոնում պաշտոնապես ներկայացրեց Հայաստանը:

Սփյուռքի գաղթօջախներում և Հայաստանում ճանաչված թատերական գործիչ, դերասան և բեմադրիչ է Պերճ Ֆազլյանը:

Հայրենիք-սփյուռք մշակութային առնչություններում հիշարժան է նաև 1991թ-ի մայիսի 15-26-ը սփյուռքահայ թատրոնների անդրանիկ փառատոնի անցկացումը հայրենիքում: Փառատոնին մասնակցեցին ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Սիրիայի, Իրանի հայ թատրոնները: Այս փառատոնի շնորհիվ կարևոր քայլ արվեց գործնականորեն մերձեցնելու աշխարհասփյուռ հայ ժողովրդին: Փառատոնի Վահրամ Փափազյան անունը կրող գլխավոր մրցանակը շնորհվեց Լոս Անջելեսի «Վարդան Աճեմյան» թատերախմբին: Այդ թատերախմբի բեմադրիչն ու դերասանն է Ժան Նշանյանը: Թատերախումբը վիթխարի դեր է խաղացել արտերկրի հայության շրջանում հայրենի մշակույթի հաղորդման գործում: Թատերախումբը այնուհետև հանդես եկավ նաև աղետի գոտում՝ Գյումրիում և Վանաձորում

Ամբողջ աշխարհում սփյուռքահայ պատմաբանները մեծ նպաստ ունեն հատկապես հայ դատի պաշտպանության բնագավառում: Սփյուռքահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը հայտնի է թե՛ սփյուռքում, և թե՛ Հայաստանում: Նա մեծ դեր է կատարել հայ ժողովդի պատմությունն ու մշակույթը աշխարհին արժանավայել ներկայացնելու գործում: Պրոֆեսոր Ռ. Հովհաննիսյանը ամերիկահայ է, ուստի պատահական չէ, որ իր առաջին լուրջ պարգևներին նա արժանացել է հենց այս երկրում: Նրան շնորհվել են փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան, համալսարանական պրոֆեսորի ամենաբարձր կոչումը: Ռ. Հովհաննիսյանը ընտրվել է նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում որպես արտասահմանյան անդամ: Ռ. Հովհաննիսյանի մյուս կարևոր նախաձեռնությունը Մեծ եղեռնի պատմության գիտական ուսումնասիրությունն է, այդ գործի մեջ օտարերկրյա պատմաբանների ներգրավումը: Նրա խմբագրությամբ հրատարակվել է «Հայերի ցեղասպանությունը հեռանկարում» խիստ արժեքավոր աշխատությունը, որին իրենց մասնակցությունն են բերել գենոցիդի պատմության ճանաչված մասնագետներ Լեո Կուպերը, Ռոբերտ Սեյսոնը, Իսրայել Չարնին և ուրիշներ:

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ է նաև «Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամի» տնօրենների խորհրդի նախագահ Ռոբերտ Կյուլպենկյանը՝ պատմության և բանասիրության ասպարեզներում ունեցած ծառայությունների համար: Ռ. Կյուլպենկյանը նաև հասարակական ակտիվ գործիչ է, մեծ հայրենասեր, որն իր նպաստն է բերել մայր հայրենիքին: «Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամը» սերտ կապերի մեջ է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ, պարբերաբար նյութական աջակցություն է ցույց տալիս Հայաստանին, առաքում արժեքավոր գրականություն:

Պատմական գիտությունների դոկտոր Հրայր Դեքմեջյանը Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի քաղաքական գիտությունների ամբիոնի վարիչն

է, Կալիֆորնիայի կենտրոնական հեռուստածրագրի քաղաքական մեկնաբանը, ճանաչված արևելագետ, գիտահետազոտական մի շարք աշխատությունների հեղինակ:

Սփյուռքահայ անվանի պատմաբան և միջազգային իրավունքի մասնագետ պրոֆեսոր Վահագն Տատրյանը միջազգային ճանաչում ունեցող գիտնական է: Նա իր կյանքը գրեթե ամբողջությամբ նվիրել է հայկական ցեղասպանության պատմագիտական ուսումնասիրման գործին՝ հրատարակելով բազմաթիվ ուսումնասիրություններ այդ թեմայով: Վ Տատրյանը Հայաստանի ԳԱԱ արտասահմանյան անդամ է:

Բառարանագիր, լեզվաբան, թարգմանիչ, հայագետ, միջազգային ճանաչում ունեցող Բարսեղ Թուղլաջյանն ապրում և ստեղծագործում է Պոլսում: Նա շուրջ 20 երկրներում պատմաբանասիրական տարբեր պրպտումներ է կատարել, հրատարակել տասնյակ լեզվաբանական և պատմաբանասիրական երկեր:

Հալեպահայ ազգագրագետ, բանահավաք, հայ դպրոցի պատմությունն ուսումնասիրող և մանկավարժ է Հակոբ Չոլաքյանը: Նրա ուսումնասիրությունների կենտրոնում հայրենի շրջանի բարբառն է: Չոլաքյանին են պատկանում կոթողային այնպիսի աշխատանքներ, ինչպիսին է «Քեսապ» եռահատոր մատենաշարը:

Իր ազգային հասարակական գործունեությամբ թե սփյուռքում, և թե հայրենիքում առանձնանում է հատկապես Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության անդամ և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության փոխնախագահ Հայկաշեն Ուզունյանը: «Տեսիլքի մարդը» Հայկաշեն Ուզունյանը հայտնի է իր ակտիվ գործունեությամբ քաղաքական, եկեղեցական և դպրոցական ոլորտներում: Իր հայանպաստ գործունեության համար Հայկաշեն Ուզունյանը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից պարգևատրվել է «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Ա կարգի շքանշանով[13]:

Արտերկրում հայ մշակույթի պահպանման գործում վիթխարի ներդրում ունի հատկապես Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Մեծ էր ցավը, երբ փակվեց Մուրադ-Ռափայելյան վարժարանը և դադարեցրեց իր կրթական մշակութային գործունեությունը: Միաբանությունը լրջորեն մտահոգված է իր հետագա գոյության խնդրով: Այդ ասպարեզում առաջընթաց քայլ էր այն, որ 2000թ-ին Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի պատմական զույգ ճյուղավորումները երկարատև բանակցություններից և քննարկումներից հետո որոշեցին միավորվել՝ ստեղծելով մեկ կենտրոնական վարչություն ունեցող Մխիթարյան միացյալ միաբանություն: Այս պատմական քայլը կարևոր էր միաբանության հետագա գործունեությունը շարունակելու համար:

---

[13] Ազգ, 25 սեպտեմբերի, 1991թ.:

1999թ-ից անցկացվում է նաև «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնը, որի նպատակն է Հայաստանին իրազեկ դարձնել սփյուռքի մշակութային կյանքին՝ կազմակերպելով մշակութային խմբերի, անհատ գործիչների ելույթները Հայաստանում և սփյուռքում: Փառատոնի միջոցառումներն ընդգրկում են սփյուռքի գրեթե բոլոր գաղթօջախները: Փառատոնի միջոցառումներից են Միջազգային գիտաժողով «Հայկական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման և պահպանության խնդիրները» թեմայով, Հայաստանի ու Արցախի նկարիչների ցուցահանդեսը, «Աթանյան» գեղագիտական կենտրոնի (ԱՄՆ) երեխաների ստեղծագործությունների ցուցահանդեսը, «Անի» պարախմբի (ԱՄՆ) համերգները Հայաստանում և Արցախում, կինոռեժիսոր Պոլ Գալինյանի (ԱՄՆ) «Սարոյան մարդը, գրողը» ֆիլմի ցուցադրումը Հայաստանում և Արցախում, նկարիչների գիտաժողովը Հայաստանի և սփյուռքի նկարիչների մասնակցությամբ Ջերմուկում, Գերմանիկ Վասպուրական մշակութային միության (Հալեպ) հայկական տարազների ցուցահանդեսը Հայաստանում և Արցախում Հայրենիք-սփյուռք առնչություններում ակտիվ տեղաշարժեր կատարվեցին հատկապես 1999թ-ին: Դա առաջին հերթին արտահայտվեց Երևանում համահայկական խաղերի և «Հայաստան-Սփյուռք» խորհրդաժողովի անցկացմամբ: Այդ երկու կարևոր միջոցառումների նպատակն էր հայրենիք-սփյուռք կապերի ավելի սերտացումը: Համահայկական խաղերին մասնակցեցին աշխարհի 23 երկրներից 53 քաղաքներ:[14] Աշխարհի տարբեր երկրներից հայրենիք ժամանած սփյուռքահայ երիտասարդները սերտորեն առնչվեցին իրենց հայրենակիցների հետ, տեսան և ճանաչեցին հայրենիքը:

Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովը տեղի ունեցավ 1999թ-ի սեպտեմբերի 21-24-ը: Խորհրդաժողովին մասնակցեցին աշխարհի 50 երկրներից ժամանած Հայաստանի և Արցախի շուրջ 1300 ներկայացուցիչներ: «Առաջին անգամ մենք հավաքվել ենք աշխարհի բոլոր ծայրերից, որպեսզի անկեղծ երկխոսությամբ քննության առնենք նոր հազարամյակում մեր ազգային ինքնության զարգացման հիմնախնդիրները»,—խորհրդաժողովում նշեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը[15]:

Այսպիսով ակնհայտ է հայրենիք-սփյուռք համագործակցության վիթխարի նշանակությունը երկուստեք, մի համագործակցություն, որի շարունակականությունը խոստանում է լինել առավել հեռանկարային և նպատակաուղղված: Հայրենիք-սփյուռք մշակութային համագործակցությունը նոր վերելք և նոր երանգ է հաղորդում հայ մշակույթին՝ այն դարձնելով առավել հարուստ և գրավիչ: Սփյուռքահայությունը ծանոթանալով հայրենի մշակույթին՝ պահպանում է հայկականությունը, հավատով է լցվում ապագայի նկատմամբ:

---

[14] Հայաստանի Հանրապետություն, 22 հուլիսի, 1999թ.:
[15] Հայաստանի Հանրապետություն, 23 սեպտեմբերի, 1999թ.: